

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ
վարքագծային հետազոտություն
ՀՀ քրեակատարողական հիմնարկներում
գտնվողների շրջանում

2016



ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման
հանրապետական կենտրոն

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի (ՁԻԱՀ-ի ԿՀԿ) կողմից: Հետազոտության ընդհանուր համակարգումը և գիտական ղեկավարումն իրականացրել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր Սամվել Գրիգորյանը: Հետազոտությունն իրականացրած հիմնական խմբում ներգրավված են եղել համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ Արշակ Պապոյանը, կանխարգելման բաժնի վարիչ Ժանետա Պետրոսյանը, բժիշկ-վիճակագիրներ Տրդատ Գրիգորյանը և Լիլիթ Հովհաննիսյանը, բժիշկ-համաճարակաբաններ Վարդան Արզաքանյանը և Էդուարդ Հովհաննիսյանը:

Հետազոտությունն իրականացրած խումբն իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր ներգրավված են եղել հետազոտության ընթացքում, այդ թվում հետազոտության մասնակիցներին:

Հետազոտությունն իրականացվել է ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	1
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ	4
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	4
ԸՆՏՐԱՆՔԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ	5
Ընտրանքի չափը	5
Հետազոտության մեջ ընդգրկելու չափանիշները.....	5
Ընտրանքի ձևավորման մեթոդը	5
Իրականացնող անձնակազմը.....	5
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	6
Էթիկական հարցեր	6
Տվյալների պաշտպանության ապահովում	6
Հետազոտության բացերը	7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	7
Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ.....	7
Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների սեռական կյանքի բնութագիր	9
Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների՝ թմրամիջոցների գործածմանն առնչվող վարքագիծ.....	12
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, վարակման վտանգի ինքնագնահատում և պահպանակների հասանելիություն.....	15
ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը	16
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ	18
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	19
ՀԱՎԵԼՎԱԾ Ա	20
Հարցաշար.....	20

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԶԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ԶԻԱՀ-ի ԿՀԿ	«ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
ՎՄ	վստահության միջակայք
ՔԿՀ	քրեակատարողական հիմնարկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցում ներկայացված են 2016թ. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) գտնվողների շրջանում իրականացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ վարքագծային հետազոտությունների արդյունքները: Հետազոտության հիմնական նպատակն էր պարզել նշված խմբում ռիսկային վարքագծի դրսևորումները կանխարգելման ծրագրերի և ռազմավարությունների մշակման համար անհրաժեշտ տվյալներ ստանալու համար:

Հետազոտությունն իրականացվել է ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում 2002թ., 2005թ., 2007թ., 2010թ., 2012թ., 2014թ. և 2016թ. իրականացվել են վարքագծային հետազոտություններ, որոնք հնարավորություն են տվել բացահայտելու ՄԻԱՎ-ով վարակմանը և ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող վարքագծային գործոնները, գնահատելու ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը, ռիսկային վարքագծի փոփոխության միտումները: Անցկացված հետազոտությունները նաև հնարավորություն են տվել գնահատելու կանխարգելիչ ծրագրերում ընդգրկվածությունը, իսկ ստացված տվյալները կօգտագործվեն իրականացվող կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության գնահատման և որոշումների կայացման գործընթացներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սույն հետազոտության նպատակներն էին՝

- պարզել ՔԿՀ-ներում գտնվողների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները (տարիք, ամուսնական կարգավիճակ և այլն),
- գնահատել ռիսկային սեռական վարքագիծը,
- գնահատել թմրամիջոցների գործածման հետ կապված վարքագիծը,
- գնահատել ՀՀ ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը,

- գնահատել կանխարգելիչ ծրագրերում ընդգրկվածությունը,
- ստանալ տվյալներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործող ազգային ծրագրի ազդեցության և արդյունքի ցուցանիշների հաշվարկման համար,
- ստանալ տվյալներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2017-2021թթ. ազգային ծրագրի ելակետային ցուցանիշների կառուցման համար:

ԸՆՏՐԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Ընտրանքի չափը

ՔԿՀ-ներում գտնվողների ընտրանքի չափը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով նախկինում իրականացված նմանատիպ հետազոտությունների փորձը: Ընդհանուր առմամբ հետազոտության մեջ ընդգրկվել է ՔԿՀ-ներում գտնվող 350 անձ:

Հետազոտության մեջ ընդգրկելու չափանիշները

Քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ՝ քննչական կալանքի տակ գտնվողներ և ազատազրկման դատապարտվածներ:

Ընտրանքի մեջ ընդգրկվելու չափանիշներին համապատասխանող յուրաքանչյուր անձ ընդգրկվել է հետազոտության մեջ միայն տեղեկացված համաձայնություն տալուց հետո:

Ընտրանքի ձևավորման մեթոդը

ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում վարքագծային հետազոտություններ իրականացնելու համար կիրառվել է կանոնավոր կամ հասարակ պատահական ընտրանքի մեթոդը:

Խմբի բոլոր անդամներն ունեցել են ընտրանքի մեջ ընդգրկվելու հավասար հավանականություն: Ընտրանքը ձևավորելու համար նախ ընտրվել է պատահական ելակետ, ապա ընդհանուր հետազոտվող խմբից ընտրվել է յուրաքանչյուր N-րդը:

Վարքագծային հետազոտություններն իրականացվել են ՀՀ 12 ՔԿՀ-ում:

Իրականացնող անձնակազմը

Իրականացնող անձնակազմն անցել է համապատասխան հրահանգավորում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Տվյալները կրկնակի մուտքագրվել, համեմատվել են և, անհամապատասխանությունների դեպքում, ուղղվել: Բոլոր տվյալները գրանցվել են մասնակցի հատուկ համարով, և հարցման մասնակիցներին չբացահայտելու նպատակով որևէ անձնական տվյալ չի գրանցվել:

Վերլուծությունը կատարվել է հետազոտությունն իրականացրած խմբի կողմից: Բոլոր տվյալները վերլուծվել են՝ օգտագործելով SPSS ծրագիրը:

Սույն զեկույցում տվյալները ներկայացված են աղյուսակների և գծապատկերների տեսքով:

Էթիկական հարցեր

ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի էթիկայի հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել 2016 թվականին իրականացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների փաստաթղթերի փաթեթը, այդ թվում ՔԿՀ-ներում իրականացվելիք վարքագծային հետազոտություններին առնչվողները (հավելված Ա):

Բոլոր մասնակիցներն ընդգրկվել են հետազոտության մեջ միայն կամավորության սկզբունքով: Հետազոտությունները եղել են անանոն: Վարքագծային հետազոտություններն իրականացվել են մասնակիցների բանավոր տեղեկացված համաձայնությամբ: Հարցազրույցի մասնակցած բոլոր անձինք տեղեկացվել են, որ իրենց ինքնությունը բացահայտող որևէ տվյալ չի գրառվելու հարցաթերթիկի լրացման ժամանակ, իսկ հարցման տվյալները վերլուծվելու են ամբողջ խմբի կտրվածքով, այլ ոչ թե անհատապես: Մասնակիցներին նաև բացատրվել է, որ ցանկացած պահի նրանք կարող են դադարեցնել իրենց մասնակցությունը հետազոտությանը:

Տվյալների պաշտպանության ապահովում

Հարցազրույցների ժամանակ հավաքագրված տվյալները հասանելի են եղել սահմանափակ թվով մարդկանց՝ համակարգողին, հարցազրուցավարին և տվյալները մուտքագրող մասնագետին: Տվյալների արխիվները պաշտպանված են եղել ծածկագրով և պահվել են հուսալիորեն փակվող պահարանում: Հետազոտության ավարտից հետո էլեկտրոնային և տպագիր բոլոր տվյալները պահվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում՝ փակվող սենյակում:

Հետազոտության բացերը

Բնակչության թիրախային խմբերի շրջանում անցկացվող վարքագծային տարբեր հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակիցների՝ ռիսկային վարքագծին առնչվող որոշ հարցերի (օրինակ՝ պահպանակի, թմրամիջոցների, ներարկման պարագաների գործածմանը, զուգընկերների թվին վերաբերող հարցեր) պատասխանները կարող են բացարձակ նույնությամբ չարտացոլել հարցման ենթարկվածի վարքագծային առանձնահատկությունները: Դրանք կարող են լինել կա՛մ որոշակիորեն չափազանցված, կա՛մ, ընդհակառակը, նվազեցված: Հարցման ենթարկվածները նաև պետք է հիշեին մինչև մեկ տարվա ընթացքում իրենց դրսևորած վարքագծերը, ինչը կարող էր ազդել պատասխանների ճշգրտության վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ

Ընդհանուր առմամբ հարցման է ենթարկվել ՀՀ 12 ՔԿՀ-ներում գտնվող 350 մարդ, որոնց գերակշռող մեծամասնությունը՝ 75,5%-ը, 25 և բարձր տարիքի էր (աղյուսակ 1): Միջին տարիքը կազմել է 31, մեղիանան՝ 33,8 (սահմաններ՝ 18-68):

Հարցման ենթարկվածների ընդամենը 3,7%-ն է եղել իգական սեռի ներկայացուցիչ:

Հարցման ենթարկվածների գրեթե կեսը՝ 49,7%-ն ուներ միջնակարգ կրթություն: Ամուսնացած լինելու մասին նշել է 32,8%-ը:

Հարցման ենթարկվածների 65,2%-ը ՔԿՀ-ում էր առաջին, 17,8%-ը՝ երկրորդ, 16,9%-ը՝ երրորդ և ավելի անգամներ: Մեծամասնությունը՝ 62,2%-ը, ՔԿՀ-ում էր 2 տարուց ավելի:

Աղյուսակ 1. Քրեակարարողական հիմնարկներում գտնվողների սոցիալ-
ժողովրդագրական բնութագրիչները

		N = 350
	n	% (95% վստահության միջակայք)
Տարիք		
20-ից ցածր	16	4,9 (2,5- 7,4)
20-24	64	19,6 (15,3- 24,4)
25-34	116	35,6 (30,2- 40,5)
35-44	77	23,6 (19,4- 27,9)
45 և բարձր	53	16,3 (12,0- 20,4)
Տարիքային խումբ		
25-ից ցածր	80	24,5 (19,9- 29,4)
25 և բարձր	246	75,5 (70,6- 80,1)
Մեղիանա, միջին տարիք, սահմաններ		33,8; 31,0 (18-68)
Սեռ		
Արական	335	96,3 (94,3- 98,3)
Իգական	13	3,7 (1,7- 5,7)
Կրթություն		
Թերի միջնակարգ	67	19,6 (15,5- 24,0)
Միջնակարգ	170	49,7 (44,5- 54,7)
Միջին մասնագիտական	27	7,9 (5,3- 10,8)
Թերի բարձրագույն	39	11,4 (8,2- 15,2)
Բարձրագույն	39	11,4 (8,2- 14,9)
Ընտանեկան կարգավիճակ		
Ամուրի	146	42,8 (37,5- 47,8)
Ամուսնացած	112	32,8 (28,2- 37,8)
Ամուսնալուծված	66	19,4 (15,0- 23,5)
Քաղաքացիական ամուսնություն	8	2,3 (0,9- 4,1)
Այրի	9	2,6 (1,2- 4,4)
Որերորդ անգամ են գտնվում ՔԿՀ-ում		
Առաջին	212	65,2 (60,3-70,2)
Երկրորդ	58	17,8 (14,2-21,8)
Երրորդ և ավելի	55	16,9 (12,9-21,2)
ՔԿՀ-ում գտնվելու տևողությունը		
1 տարի և ավելի պակաս	31	14,0 (9,5-18,9)
1-2 տարի	53	23,9 (18,5-29,3)
2 տարուց ավելի	138	62,2 (55,9-68,5)

Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների սեռական կյանքի բնութագիր

Հարցման ենթարկվածների գերակշռող մեծամասնությունը՝ 85,9%-ը, երբևէ ունեցել է սեռական հարաբերություն (աղյուսակ 2): Նրանց 43,3%-ն առաջին անգամ սեռական հարաբերություն ունեցել է 20-ից բարձր տարիքում: Միջին տարիքը սեռական առաջին հարաբերության ժամանակ կազմել է 19, իսկ մեղիանան՝ 18,5 (սահմանները՝ 12-30):

Աղյուսակ 2. Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների սեռական կյանքի բնութագրիչներ

		N = 350	
	n	% (95% վստահության միջակայք)	
Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն			
Այո	298	85,9 (81,8-89,6)	
Ոչ	49	14,1 (10,4-18,2)	
Տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ			
15 և ցածր	46	22,9 (16,9-28,9)	
16-19	68	33,8 (27,4-40,8)	
20 և բարձր	87	43,3 (36,3-49,8)	
Մեղիանա, միջին տարիք, սահմաններ		18,5; 19; (12-30)	
Սեռական հարաբերություն վերջին 30 օրվա ընթացքում			
Այո	140	47,3 (41,5-53,7)	
Ոչ	156	52,7 (46,3-58,5)	
Պահպանակի օգտագործումը սեռական վերջին հարաբերության ժամանակ վերջին 30 օրվա ընթացքում			
Այո	130	92,9 (88,2-96,6)	
Ոչ	10	7,1 (3,4-11,8)	
Սեռական հարաբերություն պատահական զուգընկերոջ հետ վերջին մեկ տարվա ընթացքում			
Այո	141	48,3 (42,7-53,9)	
Ոչ	151	51,7 (46,1-57,3)	
Պատահական զուգընկերների թիվը վերջին մեկ տարվա ընթացքում			
1	54	62,8 (52,4-73,4)	
2	13	15,1 (8,0-23,3)	
3	10	11,6 (5,6-19,0)	
4	2	2,3 (0,0-5,9)	
5 և ավելի	7	8,1 (3,4-14,1)	
Մեղիանա, միջին թիվ, սահմաններ		1,9; 1,0 (1-15)	


		N = 350
	n	% (95% վստահության միջակայք)
Պահպանակի օգտագործումը պատահական զուգընկերոջ հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ		
Այո	120	85,7 (79,9-91,3)
Ոչ	20	14,3 (8,7-20,1)
Պահպանակի օգտագործման հաճախականությունը պատահական զուգընկերոջ հետ վերջին մեկ տարվա ընթացքում		
Ամեն անգամ	69	49,3 (41,9-57,7)
Ոչ միշտ	58	41,4 (32,8-49,3)
Երբեք	13	9,3 (4,9-13,9)
Պատահական զուգընկերոջ հետ մշտապես պահպանակ չօգտագործելու պատճառները		
Շատ թանկ է	2	2,9 (0,0-7,7)
Ամաչում է գնել	2	2,9 (0,0-7,6)
Դժվար է օգտագործել	4	5,7 (1,4-11,5)
Այնքան էլ հասանելի չէ	9	12,9 (5,3-22,0)
Նվազեցնում է հաճույքը	27	38,6 (27,4-51,3)
Ամաչում է խնդրել զուգընկերոջը օգտագործել այն	34	48,6 (37,3-60,3)
Վստահում է զուգընկերոջը	37	52,9 (41,6-64,3)
Չգիտի պահպանակի օգտագործման արդյունավետության մասին	35	50,0 (38,6-61,4)
Օգտագործում է հղիության կանխարգելման համար	3	4,3 (0,0-9,6)
Պահպանակի օգտագործման հաճախականությունը վերջին մեկ տարվա ընթացքում (բոլոր զուգընկերների հետ)		
Ամեն անգամ	117	44,4 (38,0-49,8)
Ոչ միշտ	82	30,8 (25,2-36,0)
Երբեք	67	25,2 (19,9-31,0)
Մշտապես պահպանակ չօգտագործելու պատճառները (բոլոր զուգընկերների հետ)		
Շատ թանկ է	1	0,7 (0,0-2,1)
Ամաչում է գնել	3	2,0 (0,0-4,2)
Դժվար է օգտագործել	7	4,8 (1,4-8,3)
Այնքան էլ հասանելի չէ	12	8,2 (4,0-12,8)
Նվազեցնում է հաճույքը	61	41,5 (32,6-49,7)
Ամաչում է խնդրել զուգընկերոջը օգտագործել այն	30	20,4 (14,3-27,1)
Վստահում է զուգընկերոջը	52	35,4 (27,0-43,3)
Չգիտի պահպանակի օգտագործման արդյունավետության մասին	38	25,9 (18,9-33,3)
Օգտագործում է հղիության կանխարգելման համար	23	15,6 (9,9-22,1)

		N = 350
	n	% (95% վստահության միջակայք)
ՔԿՀ-ներում գտնվողների սեռական հարաբերություններն այլ ազատազրկվածների հետ՝ ըստ հարցման ենթարկվածների		
Բոլորը	18	5,6 (3,4-8,0)
Մեծամասնությունը	34	10,5 (7,4-13,9)
Կեսը	18	5,6 (3,4-8,0)
Համարյա ոչ ոք	23	7,1 (4,3-10,2)
Չգիտեմ	230	71,2 (65,9-76,2)
Պահպանակի օգտագործումը այլ ազատազրկվածների հետ սեռական հարաբերությունների ժամանակ՝ ըստ հարցման ենթարկվածների		
Բոլորը	13	14,6 (7,9-22,2)
Մեծամասնությունը	20	22,5 (13,5-31,0)
Կեսը	7	7,9 (2,4-13,7)
Համարյա ոչ ոք	10	11,2 (5,2-18,3)
Չգիտեմ	39	43,8 (33,3-54,7)
ՔԿՀ-ում գտնվող անձն անհրաժեշտության դեպքում կարող է ձեռք բերել պահպանակ		
Այո	244	79,5 (74,9-84,0)
Ոչ	63	20,5 (16,0-25,1)

Վերջին 30 օրվա ընթացքում սեռական հարաբերություն ունեցել է հարցման ենթարկվածների 47,3%-ը, որոնցից սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ է օգտագործել մոտ 93%-ը:

Վերջին մեկ տարվա ընթացքում պատահական զուգընկեր ունեցել է հարցման ենթարկվածների 48,3%-ը, որոնց հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործել է 85,7%-ը: Հարցման ենթարկվածների ավելի քան 37%-ն ունեցել է մեկից ավելի պատահական զուգընկեր: Պատահական զուգընկերոջ հետ մշտապես պահպանակ օգտագործում է հարցման ենթարկվածների ընդամենը 49,3%-ը (գծապատկեր 1): Պատահական զուգընկերոջ հետ մշտապես պահպանակ չօգտագործելու հիմնական պատճառների թվում են զուգընկերոջ նկատմամբ վստահությունը՝ մոտ 53%, պահպանակի օգտագործման արդյունավետության մասին չիմանալը՝ 50%, պահպանակ օգտագործելու համար զուգընկերոջը խնդրելուց ամաչելը՝ 48,6%:

Գծապատկեր 1. Պահպանակի օգտագործումը տարբեր զուգրնկերների հետ



Հարցման ենթարկվածների միայն 44,4%-ն է վերջին մեկ տարվա ընթացքում բոլոր զուգրնկերների հետ մշտապես պահպանակ օգտագործել: Մշտապես պահպանակ չօգտագործելու հիմնական պատճառներն են հաճույքի նվազեցումը՝ 41,5%, զուգրնկերոջ նկատմամբ վստահությունը՝ 35,4%, պահպանակի օգտագործման արդյունավետության մասին չիմանալը՝ մոտ 26%:

Հարցման ենթարկվածների 71,2%-ը չգիտի այլ ազատագրկվածների հետ ՔԿՀ-ներում գտնվողների սեռական հարաբերություններ ունենալու մասին, իսկ 10,5%-ի կարծիքով այդպիսի հարաբերություններ ունենում է ՔԿՀ-ներում գտնվողների մեծամասնությունը:

Հարցման ենթարկվածների 22,5%-ը գտնում է, որ նման հարաբերությունների ժամանակ մեծամասնությունն օգտագործում է պահպանակ: Միաժամանակ հարցման ենթարկվածների 79,5%-ը նշել է, որ ՔԿՀ-ում գտնվող անձն անհրաժեշտության դեպքում կարող է ձեռք բերել պահպանակ:

Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների՝ թմրամիջոցների գործածմանն առնչվող վարքագիծ

Երբևէ թմրամիջոցներ գործածել է հարցման ենթարկվածների 36,2%-ը (աղյուսակ 3): Հարցման ենթարկվածների 60%-ն առաջին անգամ թմրամիջոց օգտագործել է 15-24 տարեկան հասակում: Հարցման ենթարկվածների միջին տարիքն առաջին անգամ թմրամիջոց օգտագործելիս կազմել է 20, իսկ մեդիանան՝ 20,6 (սահմաններ՝ 12-32):

Աղյուսակ 3. ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում թմրամիջոցների գործածումը

		N = 350
		n
		% (95% վստահության միջակայք)
Երբևէ գործածել են թմրամիջոցներ		
Այո	125	36,2 (31,3-41,4)
Տարիքն առաջին անգամ թմրամիջոց գործածելիս		
10-14	10	14,3 (7,1-22,8)
15-19	20	28,6 (17,2-40,0)
20-24	22	31,4 (21,4-41,4)
25 և բարձր	18	25,7 (15,7-35,7)
Մեղիանա, միջին տարիք, սահմաններ		20,6; 20 (12-32)
Սեռական հարաբերություն թմրամիջոցի ազդեցության տակ		
Այո	83	66,4 (58,5-74,6)
Ոչ	33	26,4 (18,9-34,7)
Չեմ հիշում	9	7,2 (3,1-11,8)
Երբևէ գործածել է թմրամիջոց ներարկային ճանապարհով		
Այո	92	73,6 (65,8-81,6)
Տարիքն առաջին անգամ ներարկային ճանապարհով թմրամիջոց գործածելիս		
10-14	2	3,0 (0,0-7,5)
15-19	10	14,9 (7,5-22,4)
20-24	38	56,7 (44,8-68,7)
25 և բարձր	17	25,4 (14,9-35,8)
Մեղիանա, միջին տարիք, սահմաններ		21,8; 21,0 (12-34)
Վերջին մեկ ամսվա ընթացքում թմրամիջոցների ներարկային գործածում		
Այո	78	85,7 (78,4-92,5)
Ոչ	13	14,3 (7,5-21,6)
Թմրամիջոցներ ներարկելիս միանվագ ներարկիչների օգտագործում		
Այո	77	86,5 (79,4-93,3)
Ոչ	12	13,5 (6,7-20,6)
Վերջին մեկ ամսվա ընթացքում ընդհանուր ներարկման պարագաների օգտագործում		
Այո	66	85,7 (77,3-93,3)
Ոչ	11	14,3 (6,7-22,7)
Երբևէ ուրիշի կողմից պատրաստված թմրամիջոցի օգտագործում		
Այո	71	77,2 (68,1-85,9)
Ոչ	21	22,8 (14,1-31,9)
Վերջին մեկ ամսվա ընթացքում թմրամիջոց ներարկելիս ոչ ստերիլ պարագաների օգտագործում		
Այո	38	49,4 (38,5-60,6)
Ոչ	39	50,6 (39,4-61,5)

		N = 350
	n	% (95% վստահության միջակայք)
Թմրամիջոցների ներարկային վերջին գործածման ժամանակ ստերիլ ասեղի և ներարկիչի օգտագործում		
Այո	63	70,0 (60,7-78,9)
Ոչ	27	30,0 (21,1-39,3)
Թմրամիջոցների ներարկային վերջին գործածման ժամանակ ստերիլ ասեղի և ներարկիչի օգտագործման ցուցանիշը	54	70,1 (59,7-79,7)
Մինչ թմրամիջոց ներարկելը ասեղների և ներարկիչների ախտահանումը		
Այո, միշտ ախտահանում է	39	45,3 (34,9-56,5)
Երբեմն է ախտահանում	16	18,6 (10,5-27,1)
Երբեք չի ախտահանում	9	10,5 (4,6-17,2)
Գործածում է միայն միանվագ ներարկիչներ և ասեղներ	22	25,6 (16,5-34,9)
Ասեղների և ներարկիչների ախտահանման ձևերը		
Լվանում է ջրով	7	13,0 (3,8-23,2)
Եռացնում է	40	74,1 (62,5-85,5)
Ախտահանում է սպիրտով կամ յոդով	7	13,0 (3,8-22,2)
ՔԿՀ-ում գտնվող անձն անհրաժեշտության դեպքում կարող է ձեռք բերել թմրամիջոցների ներարկային գործածման պարագաներ		
Այո	217	93,5 (90,5-96,6)
Ոչ	15	6,5 (3,4-9,5)
ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում թմրամիջոցների գործածումը՝ ըստ հարցման ենթարկվածների		
Բոլորը	6	2,6 (0,9-4,7)
Մեծամասնությունը	29	12,5 (8,6-16,8)
Կեսը	43	18,5 (13,4-23,7)
Համարյա ոչ ոք	31	13,4 (9,1-17,7)
Չգիտեմ	123	53,0 (47,0-59,5)

Թմրամիջոցի ազդեցության տակ երբևէ սեռական հարաբերություն ունենալու մասին նշել է հարցման ենթարկվածների 66,4%-ը:

Ներարկային ճանապարհով թմրամիջոցներ գործածել է թմրամիջոցների գործածման փորձ ունեցողների 73,6%-ը: Հարցման ենթարկվածների 56,7%-ն առաջին անգամ ներարկային ճանապարհով թմրամիջոց գործածել է 20-24 տարեկան հասակում: Միջին տարիքն առաջին անգամ ներարկային ճանապարհով թմրամիջոց գործածելիս կազմել է 21, մեղիանան՝ 21,8 (սահմաններ՝ 12-34):

Վերջին մեկ ամսվա ընթացքում ներարկային ճանապարհով թմրամիջոցներ գործածել է հարցման ենթարկվածների 85,7%-ը: Ներարկման ընդհանուր պարագաների գործածման մասին նշել է 85,7%-ը, ոչ ստերիլ պարագաների գործածման մասին՝ 49,4%-ը: Ներարկային ճանապարհով թմրամիջոցների գործածման փորձ ունեցողների 70%-ը վերջին ներարկման ժամանակ օգտագործել է ստերիլ ասեղ և ներարկիչ:

Երբևէ ուրիշի կողմից պատրաստված թմրամիջոց գործածել է 77,2%-ը:

Մինչ թմրամիջոց ներարկելը ասեղներն ու ներարկիչները մշտապես ախտահանում է 45,3%-ը, երբեք չի ախտահանում՝ 10,5%-ը, գործածում է միայն միանվագ ներարկիչներ և ասեղներ՝ 25,6%-ը:

Հարցման ենթարկվածների 53%-ը չգիտի ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում թմրամիջոցների գործածման մասին, սակայն միաժամանակ նրանց 93,5%-ի կածիքով ՔԿՀ-ում գտնվող անձն անհրաժեշտության դեպքում կարող է ձեռք բերել թմրամիջոցների ներարկային գործածման պարագաներ:

Հարցման ենթարկվածների 42%-ը նշել է վերջին 6 ամսվա ընթացքում ուրիշի ածելիի օգտագործման մասին (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. ՔԿՀ-ներում գտնվողների ռիսկային վարքագծի այլ դրսևորումներ

		N = 350
	n	% (95% վստահության միջակայք)
Վերջին 6 ամսվա ընթացքում ուրիշի ածելիի օգտագործում		
Այո	140	42,0 (36,9-47,1)
Ոչ	193	58,0 (52,9-63,1)

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, վարակման վտանգի ինքնագնահատում և պահպանակների հասանելիություն

ՔԿՀ-ներում գտնվողների գերակշռող մեծամասնությունը՝ 94%-ը, լսել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին (աղյուսակ 5): Հարցման ենթարկվածների 31,7%-ը բացառում, իսկ 54,5%-ը քիչ հավանական է համարում իր՝ ՄԻԱՎ-ով վարակվելու հնարավորությունը:

Վերջին 12 ամսվա ընթացքում կանխարգելիչ ծրագրերի շրջանակում պահպանակ է տրամադրվել հարցման ենթարկվածների 54,5%-ին:

Թեև հարցման ենթարկվածների 83,7%-ը նշել է, որ իրենց հասանելի են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն տրամադրող ծառայությունները, վերջին 12 ամսվա ընթացքում հարցման ենթարկվածների միայն 50,4%-ն է հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ, 89,3% էլ տեղեկացվել է հետազոտության ար-

ոյունքի մասին: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվածների 85,1%-ի հետազոտությունը եղել է կամավոր:

Կանխարգելման ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 80,7%:

Աղյուսակ 5. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, վարակման վտանգի ինքնագնահատում և պահպանակների հասանելիություն

		N = 350
	n	% (95% վստահության միջակայք)
Երբևէ լսել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին		
Այո	329	94,0 (91,4-96,3)
ՄԻԱՎ-ով վարակվելու վտանգի ինքնագնահատումը		
Շատ հավանական է	46	13,8 (10,2-17,4)
Քիչ հավանական է	182	54,5 (49,4-60,2)
Բացառվում է	106	31,7 (26,9-36,5)
Վերջին 12 ամսվա ընթացքում պահպանակների տրամադրում		
Այո	177	54,5 (48,9-59,7)
ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն տրամադրող ծառայությունների հասանելիություն		
Այո	288	83,7 (79,7-87,5)
Ոչ	45	13,1 (9,3-16,6)
Չգիտեմ	11	3,2 (1,7-5,2)
Վերջին 12 ամսվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվածներ		
Այո	171	50,4 (45,4-55,8)
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ձևը		
Կամավոր	143	85,1 (79,6-90,4)
Պարտադիր	24	14,3 (9,0-19,6)
Այլ	1	0,6 (0,0-1,8)
Հետազոտության արդյունքների մասին իմացածներ		
Այո	150	89,3 (84,8-94,0)
Կանխարգելման ծրագրերում ընդգրկվածությունը		
Ցուցանիշ	155	80,7 (75,0-85,9)

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը

Հարցման ենթարկվածների մեծամասնությունը՝ 74,9%-ը, կարծում է, որ ՄԻԱՎ-ով վարակման վտանգը հնարավոր է նվազեցնել՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով, 72,9%-ի կարծիքով ՄԻԱՎ-ով վարակման վտանգը հնարավոր է նվազեցնել՝ պահպանակ

օգտագործելով, 61,4%-ը գիտի, որ հնարավոր է վարակված լինել ՄԻԱՎ-ով, բայց ունենալ առողջ արտաքին: ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս ՄԻԱՎ-ով վարակվելու անհնարինության մասին գիտի հարցման ենթարկվածների 64,8%-ը, ՄԻԱՎ վարակ ունեցող մարդու հետ համատեղ սնունդ ընդունելիս ՄԻԱՎ-ով վարակվելու հնարավորությունը բացառում է 69,9%-ը, մոծակի կծելու միջոցով՝ 55,7%-ը: Հարցման ենթարկվածների 75,1%-ը գիտի, որ հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակվել՝ օգտագործելով արդեն իսկ օգտագործված ներարկման ասեղ, իսկ 57,8%-ը համարում է, որ կարելի է խուսափել ՄԻԱՎ-ով վարակվելուց՝ անցնելով թմրամիջոցների ոչ ներարկային օգտագործման:

Հարցման ենթարկվածների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման ցուցանիշը կազմել է 27,1% (աղյուսակ 6):

Աղյուսակ 6. ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքները

		N = 350	
	n	% (95% վստահության միջակայք)	
Հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով			
Այո	262	74,9(70,3-79,4)	
Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով			
Այո	253	72,9(68,3-77,8)	
Կարո՞ղ է առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված			
Այո	213	61,4(55,6-66,6)	
Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով մոծակի կծելու միջոցով			
Ոչ	195	55,7(50,3-60,9)	
Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակով հիվանդի հետ համատեղ սնունդ ընդունելիս			
Ոչ	242	69,9(64,7-74,6)	
Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս			
Ոչ	225	64,8(59,9-69,7)	
Հնարավոր է արդյոք վարակվել ՄԻԱՎ-ով՝ օգտագործվելով ներարկման ասեղը, որն արդեն օգտագործված է եղել			
Այո	262	75,1(70,5-79,7)	
Կարելի՞ է արդյոք խուսափել ՄԻԱՎ-ով վարակվելուց՝ անցնելով թմրամիջոցների ոչ ներարկային օգտագործման			
Այո	200	57,8(52,9-63,3)	
ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ	95	27,1(22,6-32,0)	

ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԻ ՈՉ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Հարցման ենթարկվածների 48,3%-ը վերջին մեկ տարվա ընթացքում ունեցել է պատահական զուգընկեր, որից 37%-ը՝ մեկից ավելի: Պատահական զուգընկերոջ հետ մշտապես պահպանակ օգտագործում է հարցման ենթարկվածների ընդամենը 49,3%-ը: Վերջին մեկ տարվա ընթացքում բոլոր զուգընկերների հետ մշտապես պահպանակ օգտագործել է հարցման ենթարկվածների միայն 44,4%-ը:

ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՑԱԾՐ ՄԱԿԱՐԴԱԿ ԵՎ ՄԻԱՎ-ՈՎ ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ՎՏԱՆԳԻ ԲԱՑԱՌՄԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ

ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը ցածր է (գիտելիքների գնահատման ցուցանիշը՝ 27,1%): Միաժամանակ հարցման ենթարկվածների 31,7%-ը բացառում, իսկ 54,5%-ը քիչ հավանական է համարում իր՝ ՄԻԱՎ-ով վարակվելու հնարավորությունը: Վերոնշյալը վկայում է, որ ՔԿՀ-ներում գտնվողները ոչ բավարար են տեղեկացված ռիսկային վարքագծերի վերաբերյալ: Անհրաժեշտ են աշխատանքներ նրանց շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման մասին գիտելիքների բարելավման և վարակման վտանգի նվազեցման համար:

ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱԾՐ ՄԱԿԱՐԴԱԿ

Թեև հարցման ենթարկվածների 83,7%-ը նշել է, որ իրենց հասանելի են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն տրամադրող ծառայությունները, վերջին 12 ամսվա ընթացքում հարցման ենթարկվածների միայն 50,4%-ն է հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ, 89,3% էլ տեղեկացվել է հետազոտության արդյունքի մասին:

Կարիք կա ընդլայնելու ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընդլայնել ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ուղղված միջոցառումները ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում՝ ՄԻԱՎ վարակի կանխարգելման մասին գիտելիքների բարելավման և վարակման վտանգի նվազեցման համար:
- ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում իրականացնել վնասի նվազեցման ծրագրեր:
- Ընդլայնել ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները:
- ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնողների համար անցկացնել սեմինար-վարժանքներ:
- Զարգացնել ՔԿՀ-ների բուժաշխատողների հմտությունները ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության ծառայություններ տրամադրելու համար:
- ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում պարբերաբար իրականացնել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ վարքագծային հետազոտություններ ՄԻԱՎ-ով վարակմանը և ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող վարքագծային գործոնները բացահայտելու, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը գնահատելու և ռիսկային վարքագծի փոփոխության միտումները մոնիտորինգի ենթարկելու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա ՀԱՐՑԱՇԱՐ

Մաս 1. Ժողովրդագրական բնութագրիչներ

h/h	Հարց	Պատասխան
101	Տարիքը	<input type="checkbox"/> չի պատասխանել 99
102	Սեռը	<input type="checkbox"/> արական 1 <input type="checkbox"/> իգական 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
103	Կրթությունը	<input type="checkbox"/> թերի միջնակարգ 1 <input type="checkbox"/> միջնակարգ 2 <input type="checkbox"/> միջին մասնագիտական 3 <input type="checkbox"/> թերի բարձրագույն 4 <input type="checkbox"/> բարձրագույն 5 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
104	Ընտանեկան կարգավիճակը	<input type="checkbox"/> ամուրի 1 <input type="checkbox"/> ամուսնացած 2 <input type="checkbox"/> ամուսնալուծված 3 <input type="checkbox"/> քաղաքացիական ամուսնություն 4 <input type="checkbox"/> այրի 5 <input type="checkbox"/> չի պատասխանել 99

Մաս 2. Սեռական կյանքին և պահպանակի օգտագործմանն առնչվող հարցեր

Ցանկանում ենք Ձեզ մի քանի հարց ուղղել Ձեր սեռական վարքագծի և կենցաղավարության վերաբերյալ: Մենք հասկանում ենք, թե որքան են այդ հարցերն անձնական, բայց միաժամանակ ցանկանում ենք մեկ անգամ ևս նշել, որ Ձեր անձի գաղտնիությունը լիովին պահպանված է, և որ նույն հարցերն ուղղվում են բոլոր հարցման ենթարկվողներին: Սեռական հարաբերությունները ներառում են օրալ, հեշտոցային և անալ հարաբերությունները:

h/h	Հարց	Պատասխան
201	Երբևիցե ունեցե՞լ եք սեռական հարաբերություններ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2
	Եթե «ոչ», անցե՞ք 301 հարցին:	<input type="checkbox"/> չի պատասխանել 99

h/h	Հարց	Պատասխան
202	Ո՞ր տարիքում եք առաջին անգամ սեռական հարաբերություն ունեցել	<p>_____</p> <input type="checkbox"/> չի պատասխանել 99
203	Ունեցե՞լ եք սեռական հարաբերություններ վերջին 30 օրվա ընթացքում <i>Եթե «ոչ», անցե՛ք 205 հարցին:</i>	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
204	Դուք (կամ Ձեր զուգընկերը) օգտագործե՞լ եք պահպանակ վերջին սեռական հարաբերության ժամանակ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
205	Վերջին մեկ տարվա ընթացքում ունեցե՞լ եք պատահական զուգընկեր (պատահական զուգընկերն այն զուգընկերն է, որը Ձեր ամուսինը/կինը չէ) <i>Եթե «ոչ», անցե՛ք 210 հարցին:</i>	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
206	Եթե այո, քանի՞ պատահական զուգընկեր եք ունեցել վերջին մեկ տարվա ընթացքում	<p>_____</p> <input type="checkbox"/> չի պատասխանել 99
207	Պատահական զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ Դուք (կամ Ձեր զուգընկերը) օգտագործե՞լ եք պահպանակ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
208	Վերջին 1 տարվա ընթացքում պատահական զուգընկերոջ հետ սեռական հարաբերության ժամանակ որքա՞ն հաճախ եք պահպանակ օգտագործել <i>Եթե «ամեն անգամ», անցե՛ք 210 հարցին:</i>	<input type="checkbox"/> ամեն անգամ 1 <input type="checkbox"/> ոչ միշտ 2 <input type="checkbox"/> երբեք 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
209	Ինչո՞ւ մշտապես պահպանակ չեք օգտագործում պատահական զուգընկերոջ հետ սեռական հարաբերության ժամանակ (հնարավոր է մի քանի պատասխան)	<input type="checkbox"/> շատ թանկ է 1 <input type="checkbox"/> ամաչում եմ գնել 2 <input type="checkbox"/> դժվար է օգտագործել 3 <input type="checkbox"/> այդքան էլ հեշտ չէ ձեռք բերել 4 <input type="checkbox"/> նվազեցնում է հաճույքը 5 <input type="checkbox"/> ամաչում եմ զուգընկերոջը խնդրել օգտագործել 6 <input type="checkbox"/> վստահում եմ զուգընկերոջս 7 <input type="checkbox"/> չգիտեմ պահպանակի օգտագործման արդյունավետության մասին 8 <input type="checkbox"/> օգտագործում եմ միայն հղիության կանխման նպատակով 9 <input type="checkbox"/> չի պատասխանել 99

h/h	Հարց	Պատասխան
210	Վերջին մեկ տարվա ընթացքում որքա՞ն հաճախ եք պահպանակ օգտագործել <i>Եթե «ամեն անգամ», անցե՛ք 212 հարցին:</i>	<input type="checkbox"/> ամեն անգամ 1 <input type="checkbox"/> ոչ միշտ 2 <input type="checkbox"/> երբեք 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
211	Ինչո՞ւ մշտապես պահպանակ չեք օգտագործում (հնարավոր է մի քանի պատասխան)	<input type="checkbox"/> շատ թանկ է 1 <input type="checkbox"/> ամաչում եմ գնել 2 <input type="checkbox"/> դժվար է օգտագործել 3 <input type="checkbox"/> այդքան էլ հեշտ չէ ձեռք բերել 4 <input type="checkbox"/> նվազեցնում է հաճույքը 5 <input type="checkbox"/> ամաչում եմ զուգընկերոջը խնդրել օգտագործել 6 <input type="checkbox"/> վստահում եմ զուգընկերոջս 7 <input type="checkbox"/> չգիտեմ պահպանակի օգտագործման արդյունավետության մասին 8 <input type="checkbox"/> օգտագործում եմ միայն հղիության կանխման նպատակով 9 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
212	Ըստ Ձեզ՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվողների ո՞ր մասն է սեռական հարաբերություն ունենում այլ ազատազրկվածների հետ <i>Եթե «չգիտեմ», անցե՛ք 214 հարցին:</i>	<input type="checkbox"/> բոլորը 1 <input type="checkbox"/> մեծամասնությունը 2 <input type="checkbox"/> կեսը 3 <input type="checkbox"/> համարյա ոչ ոք 4 <input type="checkbox"/> չգիտեմ 5 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
213	Ի՞նչ եք կարծում, նրանց ո՞ր մասն է պահպանակ օգտագործում այլ ազատազրկվածների հետ սեռական հարաբերությունների ժամանակ	<input type="checkbox"/> բոլորը 1 <input type="checkbox"/> մեծամասնությունը 2 <input type="checkbox"/> կեսը 3 <input type="checkbox"/> համարյա ոչ ոք 4 <input type="checkbox"/> չգիտեմ 5 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
214	Ի՞նչ եք կարծում, քրեակատարողական հիմնարկում գտնվող անձն անհրաժեշտության դեպքում կարո՞ղ է ձեռք բերել պահպանակ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
215	Ո՞րերորդ անգամ եք գտնվում քրեակատարողական հիմնարկում	<input type="checkbox"/> առաջին 1 <input type="checkbox"/> երկրորդ 2 <input type="checkbox"/> երրորդ և ավելի 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
216	Որքա՞ն ժամանակ է, ինչ գտնվում եք քրեակատարողական հիմնարկում	տարի [____ ____] ամիս [____ ____] <input type="checkbox"/> չի պատասխանել 99

h/h	Հարց	Պատասխան	
217	Վերջին 6 ամսվա ընթացքում օգտագործե՞լ եք ուրիշի ածելին (սափրիչը)	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99

Մաս 3. Թմրամիջոցների գործածմանն առնչվող հարցեր

Ցանկանում ենք Ձեզ մի քանի հարց ուղղել թմրամիջոցների գործածման վերաբերյալ: Հավաստիացնում ենք, որ գաղտնիությունն ապահովված է: Հիշե՛ք, որ բոլոր հարցման ենթարկվողներին տրվում են նույն հարցերը:

h/h	Հարց	Պատասխան	
301	Երբևիցե գործածե՞լ եք թմրամիջոց	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
	<i>Եթե «ոչ», անցե՛ք 401 հարցին:</i>	<input type="checkbox"/> չի պատասխանել	99
302	Ո՞ր տարիքում եք առաջին անգամ թմրամիջոց գործածել	_____	
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
303	Ունեցե՞լ եք երբևէ սեռական հարաբերություն որևէ թմրամիջոցի ազդեցության տակ	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չեմ հիշում	3
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
304	Երբևիցե գործածե՞լ եք թմրամիջոցներ ներարկային ճանապարհով	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
	<i>Եթե «ոչ», անցե՛ք 401 հարցին:</i>		
305	Ո՞ր տարիքում եք առաջին անգամ թմրամիջոց գործածել ներարկային ճանապարհով	_____	
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
306	Գործածե՞լ եք արդյոք ներարկային թմրամիջոցներ վերջին մեկ ամսվա ընթացքում	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99

Հաջորդ մի քանի հարցերը վերաբերում են թմրամիջոցների ներարկային օգտագործման պարագաներին և դրանց օգտագործմանը: «**Թմրամիջոցների ներարկային օգտագործման պարագաներն**» են՝ ասեղներ և ներարկիչներ, թմրամիջոցի պատրաստման ժամանակ օգտագործվող փարողություններ, գդալներ, ֆիլտրեր: «**Համարեղ օգտագործում**» ասելով՝ նկատի ունենք ներարկային օգտագործման այնպիսի պարագաների (ասեղներ կամ ներարկիչներ) օգտագործում,

որոնք արդեն իսկ օգտագործվել են մեկ ուրիշի (այդ թվում Ձեր զուգընկերոջ) կողմից, ինչի մասին Դուք գիտեք կամ կասկածում եք:

h/h	Հարց	Պատասխան
307	Թմրամիջոց ներարկելիս օգտագործո՞ւմ եք միանվագ ներարկիչներ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
308	Վերջին մեկ ամսվա ընթացքում օգտագործե՞լ եք արդյոք ընդհանուր ներարկման պարագաներ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
309	Երբևէ օգտագործե՞լ եք ուրիշի կողմից պատրաստված թմրամիջոց	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
310	Վերջին մեկ ամսվա ընթացքում թմրամիջոց ներարկելիս օգտագործե՞լ եք արդյոք ոչ ստերիլ պարագաներ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
311	Թմրամիջոցների վերջին ներարկային օգտագործման ժամանակ օգտագործե՞լ եք ստերիլ ասեղ և ներարկիչ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
312	Ախտահանո՞ւմ եք ասեղները և ներարկիչները մինչ թմրամիջոց ներարկելը <i>Եթե «երբեք» կամ «օգտագործում եմ միայն միանվագ ներարկիչներ և ասեղներ», անցե՛ք 317 հարցին</i>	<input type="checkbox"/> այո, միշտ ախտահանում եմ 1 <input type="checkbox"/> երբեմն եմ ախտահանում 2 <input type="checkbox"/> երբեք չեմ ախտահանում 3 <input type="checkbox"/> օգտագործում եմ միայն միանվագ ներարկիչներ և ասեղներ 4 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
313	Ինչպե՞ս եք ախտահանում ասեղները և ներարկիչները	<input type="checkbox"/> լվանում եմ ջրով 1 <input type="checkbox"/> եռացնում եմ 2 <input type="checkbox"/> ախտահանում եմ սպիրտով կամ յոդով 3 <input type="checkbox"/> այլ _____ 4 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
314	Ի՞նչ եք կարծում, անհրաժեշտության դեպքում քրեակատարողական հիմնարկում գտնվող անձը կարո՞ղ է ձեռք բերել թմրամիջոցների ներարկային օգտագործման պարագաներ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99

h/h	Հարց	Պատասխան
315	Ձեր կարծիքով քրեակատարողական հիմնարկներում գտնվողների ո՞ր մասն է թմրամիջոց գործածում	<input type="checkbox"/> բոլորը 1 <input type="checkbox"/> մեծամասնությունը 2 <input type="checkbox"/> կեսը 3 <input type="checkbox"/> համարյա ոչ ոք 4 <input type="checkbox"/> չգիտեմ 5 <input type="checkbox"/> չի պատասխանել 99

Մաս 4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ հարցեր

h/h	Հարց	Պատասխան
401	Լսե՞լ եք արդյոք ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
402	Ինչպե՞ս եք գնահատում ՄԻԱՎ-ով Ձեր վարակվելու հավանականությունը	<input type="checkbox"/> շատ հավանական է 1 <input type="checkbox"/> քիչ հավանական է 2 <input type="checkbox"/> բացառվում է 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
403	Վերջին 12 ամսվա ընթացքում Ձեզ տրամադրվե՞լ են պահպանակներ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
404	Արդյոք հասանելի/մատչելի՞ են Ձեզ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն տրամադրող ծառայությունները	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չգիտեմ 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
405	Վերջին 12 ամսվա ընթացքում հետազոտվե՞լ եք արդյոք ՄԻԱՎ-ի վերաբերյալ <i>Եթե «ոչ» կամ «չեմ ցանկանում պատասխանել», անցե՛ք 501 հարցին</i>	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
406	Եթե հետազոտվել եք ՄԻԱՎ-ի վերաբերյալ, ի՞նչ ձևով է դա եղել	<input type="checkbox"/> կամավոր 1 <input type="checkbox"/> պարտադիր 2 <input type="checkbox"/> այլ _____ 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
407	Իմացե՞լ եք արդյոք հետազոտության արդյունքների մասին	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99

**Մաս 5. ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը
գնահատելու համար հարցեր**

h/h	Հարց	Պատասխան	
501	Հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չգիտեմ	3
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
502	Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չգիտեմ	3
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
503	Կարո՞ղ է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չգիտեմ	3
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
504	Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով մոծակի կծելու միջոցով	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չգիտեմ	3
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
505	Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակվել ՄԻԱՎ վարակով հիվանդի հետ համատեղ սնունդ ընդունելիս	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չգիտեմ	3
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
506	Հնարավոր է արդյոք ՄԻԱՎ-ով վարակվել՝ օգտագործելով ներարկման ասեղը, որն արդեն օգտագործված է եղել	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չգիտեմ	3
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
507	Կարելի՞ է արդյոք խուսափել ՄԻԱՎ-ով վարակվելուց՝ անցնելով թմրամիջոցների ոչ ներարկային օգտագործման	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չգիտեմ	3
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99
508	Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս	<input type="checkbox"/> այո	1
		<input type="checkbox"/> ոչ	2
		<input type="checkbox"/> չգիտեմ	3
		<input type="checkbox"/> չի պատասխանել	99